# ՔԱՂՎԱԾՔ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2020 թվականի ապրիլի 30-ի նիստի N 9 արձանագրությունից**
**(հարցման կարգով)**

**ԼՍԵՑԻՆ.-** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«ԵԱՏՄ երկրների տնտեսական զարգացման զուգամիտման հետազոտությունը մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա»** թեմայով համատեղ մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում՝ **«ԵԱՏՄ երկրների տնտեսական զարգացման զուգամիտման հետազոտությունը մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա»** (“Исследование уровня конвергенции стран ЕАЭС на основе макроэкономических показателей”, “Study of the Level of Convergence of EEU Countries Based on Macroeconomic Indicators”) **թեմայով համատեղ մրցույթի հայտը** և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 30
Երևան


# ՔԱՂՎԱԾՔ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2020 թվականի ապրիլի 30-ի նիստի N 9 արձանագրությունից**

**(հարցման կարգով)**

**ԼՍԵՑԻՆ.-** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում Սանկ-Պետերբուրգի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Մեխանիկայի և Օպտիկայի համալսարանի (ԻՏՄՕ) հետազոտական թիմի հետ **«Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորումը և զարգացումը նոր արդյունաբերականացման քաղաքականության համատեքստում»** թեմայով համատեղ մրցութի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Համատեղ նախագծի նպատակը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ինտեգրացման շրջանակներում համագործակցության նորագույն ձևաչափերի՝ տեխնոլոգիական պլատֆորմերի ձևավորման և զարգացման մեթոդաբանական ու գիտագործնական հիմնահարցերի մշակումն է ու դրա հիման վրա թե՛ ազգային, և թե՛ վերպետական մակարդակով որոշումների ընդունման համար արդյունավետ գործնական հանձնարարականների առաջարկումը: Նախագծի հիմնական խնդիրները հանգում են տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորման և զարգացման հաջողված միջազգային փորձի ուսումնասիրությանը ու դրա լավագույն տարրերի ինստիտուցիոնալացմանը ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսությունների տեխնոլոգիական նորացման, արդիականացման և գլոբալ չափանիշներով նրանց մրցունակության բաձրացման ուղղությամբ: Նախագծի մյուս խնդիրը վերաբերում է գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտում ԵԱՏՄ անդամ երկրներից յուրաքանչյուրի մրցակցային առավելությունների բացահայտմանը ու ելնելով դրանից՝ նոր արդյունաբերականացման քաղաքականության շրջանակներում համագործակցության առավել արդյունավետ ու փոխշահավետ գործիքակազմերի մշակմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** **Երաշխավորել** Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության **«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ՀՀՌՀ - 2020»** միջազգային մրցույթի շրջանակներում Սանկ-

Պետերբուրգի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Մեխանիկայի և Օպտիկայի համալսարանի (ԻՏՄՕ) հետազոտական թիմի հետ **«Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորումը և զարգացումը նոր արդյունաբերականացման քաղաքականության համատեքստում»** ("Формирование и развитие технологических платформ стран-членов Евразийского экономического союза в контексте политики новой индустриализации", "Formation and Development of Technological Platforms of the Member Countries of the Eurasian Economic Union in the Context of the Policy of New Industrialization") **թեմայով** (հայկական կողմի գիտահետազոտական խմբի ղեկավար՝ ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար, տնտեագիտության թեկնածու, դոցենտ **Մարգարյան Ատոմ Շավարշի**, թիմի անդամներ՝ ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի ավագ գիտաշխատող, տնտեագիտության թեկնածու **Թերզյան Հարություն Տիգրանի**, ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի դեկան, տնտեագիտության թեկնածու, դոցենտ **Պետրոսյան Արսեն Արամի**, ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի գիտաշխատող **Գրիգորյան Էմիլ Արաիկի**, ռուսական կողմի գիտահետազոտական խմբի ղեկավար՝ ԻՏՄՕ տեխնոլոգիական կառավարման և նորարարության ֆակուլտետի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր **Սերգեևա Իրինա Գրիգորևնա**, թիմի անդամներ՝ ԻՏՄՕ տեխնոլոգիական կառավարման և նորարարության ֆակուլտետի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր **Վասիլյոնոկ Վիկտոր Լեոնիդովիչ**, ԻՏՄՕ տեխնոլոգիական կառավարման և նորարարության ֆակուլտետի պրակտիկայի դոցենտ **Կովալենկո Բորիս Բորիսովիչ**, ԻՏՄՕ տեխնոլոգիական կառավարման և նորարարության ֆակուլտետի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Մեդվեդևա Օլգա Եվգենևնա**, ԻՏՄՕ տեխնոլոգիական կառավարման և նորարարության ֆակուլտետի ասիստենտ **Օռլովա Օլգա Պետրովնա**) (թեմայի ծածկագիր՝ **20RF-190**, թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը (ամիս՝) 24, հայկական կողմի գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը՝ 4, ռուսական կողմի գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը՝ 5, աշխատանքի վարձատրության գումարը՝ 9600.0 հազար դրամ, վերադիր ծախսերի գումարը՝159.6 հազար դրամ, հայցվող ընդհանուր գումարը՝ 11880.0 հազար դրամ) **համատեղ մրցույթի հայտը** և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 30

Երևան

**ՔԱՂՎԱԾՔ**

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2020 թվականի ապրիլի 30-ի նիստի N 9 արձանագրությունից**
**(հարցման կարգով)**

**ԼՍԵՑԻՆ.-** ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի հայտարարած Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ՝ **«Մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցության գնահատման միասնական մեթոդական մոտեցումների մշակում»** գիտական թեմայի մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ժամանակակից համակարգը, ունենալով զարգացման որոշակի պատմական փորձ, ներկայում կայուն զարգացման ենթատեքստում դարձել է զարգացած և նոր անկախ զարգացող պետությունների շրջակա միջավայրի վրա

բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման կամ նվազեցման առավել ազդեցիկ գործիքներից մեկը: Տնտեսական գործունեության ՇՄԱԳ իրականացման արդյունավետության, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական եզրակացությունների հիմնավորումների հավաստիության բարձրացման համար, միաժամանակ նաև, բազմաթիվ միջազգային պարտավորություններից բխող պահանջների կատարման համար հրատապ է շրջակա միջավայրի յուրաքանչյուր բնական ոլորտի վրա բացասական ազդեցության արդյունքում առաջացած վնասի էկոլոգիական և տնտեսական գնահատման մեթոդական մոտեցումների վերանայումը, լրամշակումը, կատարելագործումը և համակարգումը: Սույն ծրագիրը ուղղված է առաջնային աղտոտմանը ենթարկվող՝ մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցության էկոլոգիական և տնտեսական գնահատման միասնական մեթոդական մոտեցումների մշակմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** **Երաշխավորել** ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի հայտարարած Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ՝ **«Մթնոլորտային օդի և ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցության գնահատման միասնական մեթոդական մոտեցումների մշակում»** (“Разработка единых методологических подходов для оценки негативного воздействия на воздушные и водные ресурсы”, “Development of Unified Methodological Approaches for Assessing the Negative Impact on Air and Water Resources”) **գիտական թեմայի** (ղեկավար՝ ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտություն ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Աֆյան Նադեժդա Գրիշայի**, թիմի անդամներ՝ ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտություն ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Այվազյան Նորա Հայկի**, ՀՊՏՀ «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտության մագիստրատուրայի ուսանող **Կյուրեղյան Սևակ Վարդանի**, ՀՊՏՀ «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտության մագիստրատուրայի ուսանող **Վարդանյան Արմինե Ռաֆայելի**, հայցվող ընդհանուր գումարը՝ 26462.9 հազար դրամ) **մրցույթի հայտը** և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 30
Երևան

**ՔԱՂՎԱԾՔ**

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2020 թվականի ապրիլի 30-ի նիստի N 9 արձանագրությունից**
**(հարցման կարգով)**

**ԼՍԵՑԻՆ.-** ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի հայտարարած Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ՝ **«ՀՀ և բալկանյան երկրների միջև համագործակցության զարգացման ներուժը (Սերբիայի, Խորվաթիայի և Սլովենիայի օրինակով)»** գիտական թեմայի մրցույթի հայտը երաշխավորելու մասին հարցը:

Չնայած ՀՀ և եվրոպական երկրների միջև համագործակցության վերաբերյալ հայազգի և օտարերկրյա հեղինակների մի շարք աշխատանքերի առկայությանը, սույն հետազոտական ծրագրի շրջանակներում դիտարկվող բալկանյան երկրների (Սերբիա, Խորվաթիա, Սլովենիա) և ՀՀ միջև համագործակցության զարգացման խնդիրը շարունակում է ունենալ համակողմանի հետազոտության անհրաժեշտություն: Այդ նպատակով հետազոտական ծրագրում նախատեսվում է ուսումնասիրել ՀՀ և դիտարկվող երկրների միջև համագործակցության զարգացման ընթացիկ վիճակը, գնահատել առկա ներուժը և առաջադրել վերջինիս իրացմանն ուղղված հիմնավոր կառուցակարգեր: Առաջադրված խնդրի լուծման նպատակով կհետազոտվի երկրների միջև համագործակցության արդի վիճակը, խորքային վերլուծության կենթարկվեն դիտարկվող երկրների տնտեսական, սոցիալ-մշակութային և գիտակրթական ուղղություններով առկա

համագործակցությունը, խնդիրները և զարգացման հնարավորությունները, ինչպես նաև կներկայացվեն գործողությունների վերաբերյալ փաստարկված առաջարկներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** **Երաշխավորել** ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի հայտարարած Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ՝ **«ՀՀ և բալկանյան երկրների միջև համագործակցության զարգացման ներուժը (Սերբիայի, Խորվաթիայի և Սլովենիայի օրինակով)»** (“Потенциал развития сотрудничества между Арменией и Балканскими странами (на примере Сербии, Хорватии и Словении)”, “Potential for Cooperation Development between Armenia and the Balkan Countries (the case of Serbia, Croatia and Slovenia)”) **գիտական թեմայի** (ղեկավար՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Հախվերդյան Դավիթ Ներսիկի**, թիմի անդամներ՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու **Բուլանիկյան Վահե Սարգսի**, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Փախլյան Աննա Արմենի**, ՀՊՏՀ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության 1-ին կուրսի ասպիրանտ **Իսայան Լիանա Ռայմոնդի**, հայցվող ընդհանուր գումարը՝ 25426.1 հազար դրամ) **մրցույթի հայտը** և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 30
Երևան

## ՔԱՂՎԱԾՔ

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2020 թվականի ապրիլի 30-ի նիստի N 9 արձանագրությունից**
**(հարցման կարգով)**

**ԼՍԵՑԻՆ.-** «Ամբերդ» հետազոտական կենտրոնի մրցույթին ներկայացված՝ «Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում» թեման հաստատելու մասին հարցը (թեման առաջարկել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը):

Թեման քննարկվել և հաստատվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2020 թվականի ապրիլի 29-ի, ժամը 22:00-ի առցանց նիստում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի մրցույթին ներկայացված՝ «Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում» թեման (թեման առաջարկել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը) (որոշումն ընդունվեց հարցման կարգով՝ միաձայն, կողմ՝ 60, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0):

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Դարբինյան**

2020 թ. ապրիլի 30
Երևան